

ԻՏԱԼԱՅԻ ԴԻՎԱՆԱԴԵՏԸ ԶԵՅԹՈՒՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից և Բեռլինի կոնգրեսից հետո սուլթանական կառավարությունը Արևմտյան Հայաստանում և օսմանյան պետության հայարնակ վայրերում ուժեղացրեց հարկային և սոցիալական ճնշումների քաղաքականությունը:

Նմանօրինակ բիրտ ու վայրենի քաղաքականության դեմ 1894 թ. ոտքի ելան Սասունի լեռնականները: Սակայն ուժերը անհավասար էին, և նրանց ապստամբությունը արյան մեջ խեղդվեց: Թուրքական ջարդարարները քանդեցին 40 գյուղ և սպանեցին մոտ 16 հազար մարդ¹:

Սասունի ապստամբությունը ճնշելուց հետո թուրքերը հայկական գավառներում դիմեցին զանգվածային կոտորածների, որի ժամանակ ավերվեցին 2600 քաղաքներ և գյուղեր, ոչնչացվեցին 568 վանքեր ու եկեղեցիներ: Ժողովրդի մի մասը, ստեղծված վիճակից սարսափած, ստիպված մահմեդականություն էր րնդունում: Այդ տարիներին 559 գյուղեր դավանափոխ եղան:

1895 թ. շտանեկով թուրքական պաշտոնյաների վայրագությունները, զավթիչների դեմ դարավոր պայքարի փորձ ունեցող Զեյթունի լեռնականները պարզեցին ապստամբության դրոշմը: Նրանք նույն թվականին ազգային ժողով գումարեցին, որտեղ որոշվեց Զեյթուն փոխադրել շրջակա հայ գյուղերի բնակիչներին և ղուրս վճարել ժողովրդի համար ատելի թուրքական պաշտոնյաներին: Սկսվեց ապագա կռիվների տենզագին նախապատրաստությունը: Կուտակվեց զգալի քանակությամբ վառոդ, Մարաշից Զեյթուն տեղափոխվեց աղ, արձիճ, կայծքար³ և այլն:

Թուրքական կառավարությունը լեռնականների ապստամբությունը ճնշելու նպատակով մեծ բանակ նախապատրաստեց: Առաջին հանգիպումը կառավարական ուժերի և լեռնականների միջև տեղի ունեցավ Բերդիս-չայի մոտ, Զհան գետի ափին, որտեղ ղեյթունցիները հաջողություն չունեցան: Այս ճակատամարտից հետո լեռնականները նահանջեցին դեպի իրենց գյուղաքաղաքը՝ ճանապարհին, Զերմուկի դաշտում, կտրելով Զեյթունի թուրքական զորանոցի և Մարաշի միջև եղած հեռագրաթելերը: Դրանից հետո նրանք գրավեցին 80 դինվորով պաշտպանվող կառավարչատունը և պաշարեցին թուրքական զորանոցը, որտեղ 600 թուրքական դինվոր և սպա կար: Մի քանի օրից հետո, 1895 թ. հոկտեմբերի 18-ին այն գրավեցին: Լեռնականների ձեռքն ընկավ 2 թնդանոթ, 600 հրացան, 120.000 փամփուշտ և այլ ուսումնասիրություններ⁴:

¹ «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», Москва, 1896, стр. 240.

² «Братская помощь пострадавшим в Турции армянам», Москва, 1898, стр. XXIII.

³ Ս. Բյուրատ, Զեյթունի վրեժը, Կ. Պոլիս, 1911, էջ. 234:

⁴ Նույն տեղում, էջ 375:

Նշված իրադարձություններից հետո թուրքական բանակը Մուստաֆա Ռեմզի փաշայի գլխավորությամբ հարձակվեց Ջեյթունի վրա: Գավառի բնակիչները թողեցին իրենց գյուղերը և անասուններով ու պարենով ապաստանեցին Ջեյթունում ու Ֆոնուղում: Թուրքական բանակը լեռնագավառի վրա հարձակվեց երկու ուղղությամբ: Մեկը՝ Մուստաֆա Ռեմզի փաշայի հրամանատարությամբ շարժվեց դեպի Ջեյթուն, իսկ մյուսը Ալի Բեյի հրամանատարությամբ՝ Ֆոնուղ: Սկսվեց Ֆոնուղի ճակատամարտը: Երեք օր այդ գյուղում կուտակված հայ բնակչությունը, որի շարքերում կար 1500 կովոդ, գերմարդկային ուժերի լարումով պաշտպանվում էր: Սակայն հակառակորդի գերազանց ուժերին չդիմանալով, նրանք ճեղքեցին թուրքական զորքերի օղակը և շարժվեցին դեպի Ջեյթուն: Կովոդների հետ դեպի Ջեյթուն շարժվեց նաև Ֆոնուղում կուտակված բնակչության մի մասը, բայց Եգու կոչվող ձորում թուրքական բաշիբոզուկները հարձակվեցին անդեն բնակչության վրա, 600 հոգու սպանեցին, իսկ 400 հոգու գերի վերցրին. «շատ մը կիներ և օրիորդներ, շուղելով վավաշոտ գաղաններու ձեռքն իյնալ, բարձր ժայռերու վրայեն ինքզինքնին վար նետելով անձնասպան եղան»⁵:

Դրանից հետո Ռեմզի փաշայի ղորամասերը մոտեցան Ջեյթունին: 1895 թ. դեկտեմբերի 15-ին Ջեյթունից ոչ հեռու գտնվող Սանտոխ կոչված կիրճում տեղի ունեցավ արյունալի ճակատամարտ, որտեղ 20 հազարանոց թուրքական բանակի ղեմ կովում էր ընդամենը 500 լեռնցի: Այդ ճակատամարտում թուրքերը կորցրին 1000 զինվոր⁶:

Թուրքական հրամանատարությունը 1895 թ. դեկտեմբերի 22-ին վերսկսեց հարձակումը: 18 հրանոթ անխնա ուժակոծում էր գյուղաքաղաքը, վանքը՝ և ղորանոցը: Լեռնականները դիմադրում էին անասելի քաջությամբ: Թշնամին իր ուժերը անընդհատ մարտի էր նետում, նպատակ ունենալով օր առաջ գրավել Ջեյթունը, սակայն ամեն անգամ նրա ջանքերը ապարդյուն էին անցնում: Թուրքական կառավարությունը ստիպված ետ է կանչում բանակի հրամանատար Ռեմզիին և նրա փոխարեն հրամանատար նշանակում էտհեմ փաշային, որը առաջին իսկ օրերին փորձում էր հարձակման միջոցով ճնշել ղեյթունցիների դիմադրությունը: Բայց էտհեմ փաշային ևս չհաջողվեց որևէ շոշափելի արդյունքի հասնել:

Կուտով վրա են հասնում ցրտերը: Շրջակա գյուղերից հավաքված բաշիբոզուկները, որոնց Տավրոսի բարձունքներն էր բերել Ջեյթունը թալանելու տենչը, սկսում են լքել բանակը և հեռանալ իրենց տները: Բանակում շուտով ծայր է առնում համաճարակը, որը տարածվում է նաև Ջեյթունում: Լեռնականների մոտ սպառվում էր արճիճը, վառոգը, աղը: Բայց նրանք չէին վհատվում: Ականատեսների վկայությամբ, թուրքական թնդանոթներից արձակված ումբերի մեծ մասը չէր պայթում: Լեռնականները յուրաքանչյուր այդպիսի ումբից հանած վառոգով և արճիճով 50 փամփուշտ էին լցնում: Միայն մեկ օրում նրանք հավաքել են 1125 ումբ, որը բավական էր ավելի քան 50 հազար փամփուշտ լցնելու համար: Չնայած ստեղծված ծանր վիճակին, լեռնականները դիմադրում էին կատաղի կերպով: Ի վիճակի չլինելով կոտրել այդ դիմադրու-

⁵ Մ. Վ ա ռ ժ ա պ ե տ յ ա ն, Հուշիկ Ջեյթունի, Մարզուան, 1912, էջ 170:

⁶ Տ. Գ և ո Ր գ յ ա ն, Սանտոխ, մաս Բ, Փարիզ, 1946, էջ 122—123:

⁷ «Ջեյթունի պատմագիրք», Պոնենոս Այրես, 1960, էջ 607:

թյունը, Եւտրգի կառավարութիւնը վերջապէս համաձայնւում է, որպէսզի օտարերկրյա 6 հյուպատոսներ մեկնեն Զեյթուն և բանակցութիւններ վարեն ապստամբների և կառավարութեան միջև:

1896 թ. հունվարի 6-ին ռուսական հյուպատոսը (Միխայիլ Իվանովիչ Յակիմանսկի), ֆրանսիական փոխհյուպատոսը (Ատրիեն Պարթելմի), ավրստրոհունդարականը (Պարներոն), անգլիականը (Պարնհայմ), գերմանականը (Զոլինգեր) և իտալականը (Հենրիկոս Վիթո) ժամանեցին Զեյթուն և սկսեցին բանակցութիւնները: Բանակցութիւնների հետևանքով կնքվեց պայմանագիր լեռնականների և թուրքական կառավարութեան միջև: Պահպանված տեղեկութիւնների համաձայն, իտալական հյուպատոսը գլխավորում էր բոլոր նիստերը: Այդ կապակցությամբ Գր. Գալուստյանը գրում է. «Իտալական հյուպատոսը՝ իրրև ժողովի նախագահ՝ ատյանը բացված հայտարարելով ֆրանսերեն՝ թարգմանի միջոցով՝ կրսե թե հայկական խնդիրը պետութիւնից սեղանի վրա է, թե հատկապէս Զեյթունի համար եկած են. եթե իրենից առաջարկները ընդունվեն՝ պիտի միջամտեն ու բանակները իրենց տեղերը պիտի դառնան և պատերազմը պիտի վերջանա»⁸:

Հենրիկոս Վիթոն (1830—1904) Զեյթունում մնաց մի քանի ամիս և մանրամասն ծանոթացավ լեռնականների մղած պայքարի պատմութեանը: Այնտեղից վերադառնալով, նա գրեց և հրատարակեց (իտալերեն լեզվով) 2 հատորից բաղկացած մոտ 700 էջանոց մի աշխատութիւն:

Իր գրքի հիմնական նյութը նա վերցրել է ղեյթունցի Հովհաննես Ահարոնյանից, որ վերջինս հատկապէս հավաքել էր իտալական հյուպատոսի համար:

Այդ մասին ինքը Հ. Ահարոնյանը գրում է. «Հաշտութեան բանակցութիւններու համար Բերիայեն եկող եւրոպական հյուպատոսներեն Իտալիո հյուպատոս մըսթր Վիթո, երբ փափաք կը հայտնէ 1895—96-ի պատերազմին պատմութիւն ունենալ, զիս կը հանձնարարեն, ինչ որ սիրով հանձն առի և գրեցի»⁹:

Սակայն, ինչպէս կտեսնենք հետագայում, իտալացի դիվանագետի գիրքը միայն Զեյթունի այդ ժամանակաշրջանի անցքերի պատմութիւնը չէ: Հեղինակն իր-գրքի առաջին հատորում շարադրել է հայ ժողովրդի պատմութիւնը, իսկ երկրորդ հատորի միայն մի մասը 1895—96 թվականներին Զեյթունում տեղի ունեցող իրադարձութիւնների պատմութիւնն է: Այդ հատորում տրված է նաև Զեյթունի շրջակայքում եղած թուրքմեն, լազ և քուրդ ցեղերի մասին մանրամասն տեղեկութիւններ:

Իտալական հյուպատոսը «այդ պատմական օրերեն իբրև հիշատակ գուրգուրանոք իր մոտ պահած է Զեյթունի գորանոցին վրա ծածանած և թուրքական զնգակներեն ծակծկված հայկական դրոշակը, Աղասիի ձեռագիր նամակը և անոր կողմէ թուրք զինվորներու տրված ու հայերեն լեզվով գրված անցագիրներեն ոմանք և այլ թանկարժեք իրեր, որոնք հպարտութեամբ ցույց տված է իր տունը այցելողներուն»¹⁰:

1903 թ., իր մահվանից մեկ տարի առաջ, Հենրիկոս Վիթոն նշանակվում է Բեյրութի իտալական ընդհանուր հյուպատոս: «Զեյթունի պայմանագրում» հետևյալ տողերն են գրված նրա մասին. «Ամենուրեք, իր կորովի ջանքերուն

⁸ Գր. Գալուստյան, Մարաշ կամ Դերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934, էջ 167, Տե՛ս նաև «Պատմութիւն Ս. Դ. Հնչակյան կուսակցութեան», Պեյրութ, 1967, էջ 189:

⁹ «Զեյթունի պատմագիրք», էջ 495:

¹⁰ Նույն տեղում, էջ 795:

շնորհիվ, միշտ պայքարած է ընդդիմություն դեմ, և պետական մարդու իր ազդեցությունը բանեցուցած է հարստահարյալներն ու ճնշվածները փրկելու համար»¹¹։

Զեյթունում եղած ժամանակ իտալական հյուպատոսը հոգացել է նաև լեռնականների տնտեսական վիճակի մասին։ «Պարոն Զեյթունի իտալական հյուպատոսը,— գրում է «Մշակը»,— հեռագրել է իր գեսպանին, որ Զեյթուն ասպատանած հարյուրավոր հայերի վիճակը սոսկալի է. աղքատության և ինքնազոհությունների պատճառով հարյուրավոր հիվանդներ, միմյանց վրա թափված, պառկած են մեռածների հետ միասին։ Կանայք և երեխաները նույն-իսկ ցնցոտիներ չունեն, որ ծածկեն իրենց մերկությունը։ Երկրից դուրս ուղարկվածների մեջ շատերն ուժասպառությունից մեռան։ Կառավարությունն անկարող է նրանց օգնել, և երկրի մեջ չկա ոչ ոք, որին կարելի լիներ և նպաստ խնդրել»¹²։

Հ. Վիթուի գիրքը կոչվում է «Հայերը և Զեյթունը» (Anatolio Latino. Gli Armeni I Zeitun, volume primo, Firenze, 1897)¹³ և հրատարակել է «Անատոլիո լատինո» ծածկանվամբ։ Գրքի սկզբից մինչև վերջ երևում է, որ Հենրիկո Վիթուի համակրանքը հայ ժողովրդի կողմն է, իսկ Զեյթունի լեռնականների հերոսամարտերը նա համարում է տառապող ժողովուրդների խորհրդանշան. «Ողջո՛ւյն քեզ, Զեյթուն, դյուցա՛զն քաղաք։ Ցորչափ արևը փայլի մարդկային ղեկավարությանց վրա, բու՛ն ունդ պիտի ապրի իբրև խորհրդանշանը տառապող ժողովուրդներուն, զարթումի շեփորը անոնց համար, որոնք պառկած են ստրկության տիղմին մեջ, դրոշակը ապագա պատերազմիկներու ի պաշտպանություն իրենց ընտանեկան սրբությանց»¹⁴։

Գրքի առաջին հատորի բնաբանը Դանթեից բերված հետևյալ խոսքերն են.

Liberta va cercando ch'è di capa
Come da chi per lei vita rifiuta
Dante, Purgatorio, canto I.

«Արդ իր գալուստը թող լինի քեզ հաճո.
Հետամուտ է ազատությունը, որ թանկ է
Նրա համար որ գիտե կյանքը տալ ղոհ»¹⁵։

Ով չգիտե հայ ժողովրդի պատմությունը, ասում է հեղինակը, նա չի կարող առհասարակ դատողություններ անել Զեյթունի ապստամբության մասին, չի կարող հասկանալ, թե ինչո՞ւ այդքան ուշադրության են արժանի այդ փոքրիկ ժողովրդի գործադրած ջանքերը։ Չէ՞ որ այդ պատերազմի ժամանակ հայերի վրա էին հարձակվել ոչ միայն օստոմանյան բանակի ղինվորները, այլև շրջակա ցեղերը՝ շերքեղները, քրդերը և թուրքմենները։

¹¹ Նույն տեղում, էջ 795։

¹² «Մշակ», 1896, 19 դեկտեմբերի, № 135։

¹³ Այս աշխատության բովանդակությանը մեզ մանրամասնորեն ծանոթացրեց Ն. Գուլիաշվիլին, որին մենք հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը։

¹⁴ Տ. Գ և ո ղ յ ա ն, Սանտոխ, Փարիզ, 1945, էջ 34։

¹⁵ Դ ա ն Թ ե Ա լ ի գ ե Ր ի, Աստվածային կատակերգություն, Քավարան, Հայպետհոատ, 1952, էջ 5։

Այս գիրքը գրելու համար հեղինակը կարդացել է հայկական հարցի վերաբերյալ բոլոր այն հոգվածները, որոնք տպագրվել են ժամանակի ամսագրերում և թերթերում: Գրքում առհասարակ խոսելով քրիստոնեության և մահմեդականների ու քրիստոնեաների միջև հավատի տեսակետից եղած հակասությունների մասին, հեղինակը գտնում է, որ քրիստոնեաները, ելնելով իրենց հավատի մաքրությունից, հարգում են նաև ուրիշների հավատը և գիտակցում են, որ լավը կարող է լինել նաև նրանց մոտ:

Առաջին հատորի վերջում հեղինակը գրում է, որ շատ անգամ Հայաստանը քարուքանդ է եղել, սակայն ժամանակ անց կյանքը նորից է վերագարձել, նորից ծաղկել են հայկական գյուղերն ու քաղաքները: Եվ պատմության ընթացքում չի եղել մի ժամանակ, որ Հայաստանը չփայլատակի հորիզոնի վրա՝ սկսած տրոյական պատերազմներից մինչև Ռուսաստանի և Թուրքիայի միջև սկսված վերջին պատերազմը¹⁶:

Հեղինակը նշում է, որ վերջին երկու տարվա ընթացքում ինքը թողել է իր սովորական պարապմունքները և ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմությունը: Եվ որքան նա ծանոթացել է հայ ժողովրդի անցյալին, այնքան ավելացել է նրա համակրանքը դեպի այդ ժողովուրդը և նա ցանկացել է, որ իր ուսումնասիրությունները լինեն ավելի խորն ու լիարժեք¹⁷:

Երկրորդ հատորում հեղինակը մանրամասն նկարագրում է իր ճանապարհորդությունը դեպի Զեյթուն: Շարադրված է Այնթաբի պատմությունը, նրա աշխարհագրական դիրքը և վիճակագրությունը: Այնուհետև կանգ է առնում Այնթաբից դեպի Մարաշ կատարած ճանապարհորդության վրա, և զգալի թվով էջեր նվիրված են Մարաշի աշխարհագրությանը, պատմությանն ու վիճակագրությանը:

Գրքի երկրորդ հատորի 6-րդ դուբլը (136—155 էջերը) նվիրված է Զեյթունի պատմության հնագույն շրջանին՝ «Զեյթունի անցյալը» վերնագրով: 7-րդը (155—180 էջերը) լեռնաքաղաքի 1895 թ. հերոսական ապստամբությանը, 9-րդում բերված են լեռնաքաղաքի առանձին ներկայացուցիչների պատմածները հերոսական ապստամբության մասին: Ելնելով ճնշված ժողովուրդների ծանր վիճակից, ազատության և անկախության ջերմ պաշտպան իտալացի Հենրիկոս Վիթոն իր գրքում XIX դարը համարում է տրագիկ դար և սրախոսությամբ նշում, որ այն որպես այդպիսին վերջանում է:

Վիթոյի այս գիրքը, դժբախտաբար, մինչև այժմ չի դարձել մեր հասարակայնության սեփականությունը: Մեր կարծիքով, վատ չէր լինի, որ այն եթե ոչ ամբողջովին, գեթ որոշ կրճատումներով, առանձին գրքով հրատարակվեր:

ИТАЛЬЯНСКИЙ ДИПЛОМАТ О СРАЖЕНИЯХ В ЗЕЙТУНЕ

А. М. ПОГОСЯН

Резюме

Осенью 1895 г. в Зейтуне началось вооруженное восстание против турецких угнетателей.

¹⁶ Տե՛ս Վիթոյի նշված աշխատությունը, հ. 1, էջ 396:

¹⁷ Նույն տեղում, հատոր 2-րդ, էջ 8:

Турецкое правительство направило многочисленную армию для подавления восстания. Несмотря на длительную осаду города, армия не смогла сломить сопротивления зейтунцев.

Весть о героической борьбе горстки зейтунцев разлетелась по всему миру. Под давлением мировой общественности турецкое правительство было вынуждено согласиться с направлением в Зейтун делегации консулов шести европейских держав для посредничества между восставшими и турецкими властями. В составе делегации был итальянский консул Генрико Витто. Возвратившись из Зейтуна, Витто под псевдонимом Анатолио Латино издал книгу «Армяне и Зейтун», в которой с горячей симпатией описал прошлое армянского народа и его многовековую борьбу против султанских поработителей. По мнению автора данного сообщения, книга Витто является ценным источником исторических событий, имевших место в Зейтуне осенью 1895 г.